# ԱՌԱՋԻՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ 100-ԱՄՅԱԿԸ

*1964 թ. սեպտեմբերի 25-ին Մոսկվայում, ՍՍՌՄ մեծ թատրոնում կայացավ պարտիական, կոմերիտական և արհմիութենական ակտիվի հանդիսավոր ժողով՝ նվիրված Առաջին Ինտերնացիոնալի հիմնադրման 100-ամյակին։*

*Հանդիսավոր ժողովը բացեց ՍՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Ն. Ս. Խրուշչովը։ «Պրոլետարական ինտերնացիոնալիզմը մեր դարաշրջանի ռևոլյուցիոն դրոշն է» զեկուցումով հանդես եկավ ՍՄԿԿ Կենտկոմի քարտուղար ընկ. Բ. Ն. Պոնոմարյովը։*

*Ստորև տպագրում ենք Ն. Ս. Խրուշչովի ճառը։*

## ԸՆԿԵՐ Ն. Ս. ԽՐՈՒՇՉՈՎԻ ՃԱՌԸ

Ընկերնե՛ր։

Այսօր մենք հավաքվել ենք այստեղ նշելու մեծ իրադարձության՝ Առաջին Ինտերնացիոնալի հիմնադրման հարյուրամյակը, խոր հարգանքի տուրք տալու Առաջին Ինտերնացիոնալի հիմնադիրներին և առաջնորդներին, բանվորների միջազգային միավորման հանճարեղ ղեկավարներ Կարլ Մարքսին և Ֆրիդրիխ Էնգելսին։

Հարյուր տարի է անցել այն օրվանից, երբ եվրոպական երկրների առաջավոր բանվորների ներկայացուցիչները հավաքվեցին Լոնդոնում՝ համատեղ քննարկելու այն հարցը, թե ինչպես պայքարեն աշխատավոր մարդկանց իրավունքների ու շահերի համար, ինչ է հարկավոր անել վերացնելու մարդու կողմից մարդու շահագործման՝ ժողովուրդների համար ատելի սիստեմը։

Մինչև անցյալ դարի կեսերը պատմությունը զարգանում էր այնպես, որ մի շահագործող հասարակարգը փոխարինելու էր գալիս մի ուրիշին, որի ճնշողներին փոխարինում էին նորերը, իսկ աշխատավորները ինչպես ապրում էին, այնպես էլ շարունակում էին ապրել աղքատության և իրավազրկության պայմաններում։

Ստեղծելով Ինտերնացիոնալը, պրոլետարները ուղղակի և տիրաբար, ինչպես վայել է մեծ դասակարգին, աշխարհով մեկ հայտարարեցին՝ բավական է։ Մենք՝ բոլոր ճնշվածների ներկայացուցիչներս, մարտահրավեր ենք նետում բուրժուազիային։ Մենք հայտարարում ենք, մեր նպատակն է ոչնչացնել ամեն մի շահագործում, ճնշման բոլոր ձևերը, ստեղծել նոր հասարակարգ՝ հիմնված աշխատավոր մարդկանց եղբայրության վրա։

Առաջին Ինտերնացիոնալը մեզ՝ կոմունիստներիս համար անսահման թանկ է, որովհետև նա սկսեց կապիտալիզմի ջունգլիների մաքրումը, առաջին արահետը բացեց դեպի լույս, դեպի սոցիալիստական ապագան, բացեց այն արահետը, որը բանվոր դասակարգը իր հերոսական պայքարի հարյուր տարում դարձրեց առաջադիմության մայրուղի։

Ինչպես նշել է Վլադիմիր Իլյիչ Լենինը, «Առաջին Ինտերնացիոնալը դրեց բանվորների միջազգային կազմակերպության հիմքը՝ նախապատրաստելու համար նրանց ռևոլյուցիոն գրոհը կապիտալի վրա, դրեց սոցիալիզմի համար մղվող պրոլետարական միջազգային պայքարի հիմքը»։

Պաշտոնապես Առաջին Ինտերնացիոնալը կոչվում էր «Բանվորների միջազգային ընկերություն»։ Այս բառերի մեջ խոր իմաստ է պարունակված։

Տարբեր շարունակ շահագործողները ձգտում էին իրարից բաժանել շահագործվողներին, որպեսզի հեշտ լինի նրանց սանձելը, քամել նրանց վերջին ուժերը: Կապիտալիստները հիանալի հասկանում են, որ երբ նրանց հաջողվի իրենց երկրի բանվորներին կտրել մյուս երկրների բանվորներից, մանավանդ նրանց իրար դեմ գժտեցնել, ապա այդ դեպքում կարելի է ավելի հանգիստ հարստություն դիզել ու տիրապետել: Բուրժուազիայի լոզունգը, շահագործողների լոզունգը բոլոր երկրներում մեկ է՝ «Բաժանիր, որ տիրես»:

Մարքսը և Էնգելսը բուրժուազիայի այդ քաղաքականությանը հակադրեցին տարբեր երկրների աշխատավորների ուժերը միավորելու պրոլետարական քաղաքականությունը: Ինտերնացիոնալը մեզ՝ կոմունիստներիս համար թանկ է հենց նրանով, որ նա առաջինն սկսեց կենսագործել այդ քաղաքականությունը:

Պրոլետարական ինտերնացիոնալիզմը մի կարևորագույն, թանկարժեք ժառանգություն է, որ մեզ է թողել բանվորների միջազգային ընկերությունը: Հավատարիմ լինել նրա ոգուն, նրա պատգամներին, նշանակում է, նախ և առաջ լինել ինտերնացիոնալիստ: Դա նշանակում է ուժեր չխնայել ավելի ու ավելի ամրապնդելու աշխատավոր մարդկանց համաշխարհային դաշինքն ընդդեմ շահագործողների: Դա նշանակում է ամեն ինչ անել հանուն սոցիալիզմի և կոմունիզմի մեծ գործի հաղթանակի: *(Երկարատև ծափահարություններ)*:

Ընկերնե՛ր: Այսօր, երբ ամբողջ աշխարհը տեսնում է, թե ինչ նվաճումների է հասել բանվոր դասակարգը, երևան են եկել իրենց ինտերնացիոնալի ժառանգորդներ անվանելու ոչ քիչ սիրահարներ: Բայց ինտերնացիոնալի ժառանգորդ լինելը պատասխանատու, վերին աստիճանի պատասխանատու բան է: Լինել ինտերնացիոնալի ժառանգորդ՝ նշանակում է կենսագործել նրա հռչակած նպատակները, նշանակում է մշտապես ռեալ ավանդ մուծել կապիտալիզմի դեմ մղվող պայքարում, նոր հասարակարգի կառուցման գործում:

Եվ մենք կարող ենք ամենայն իրավամբ ասել՝ կոմունիստները ինտերնացիոնալի հարյուրամյակը նշում են որպես նրա մեծ ռևոլյուցիոն տրադիցիաների հավատարիմ ժառանգորդներ: Ինտերնացիոնալի դրոշը բարձր են պահում մարքս-լենինյան պարտիաները: *(Բուռն ծափահարություններ)*:

Մենք՝ սովետական մարդիկ այսօրվա հոբելյանը առանձնահատուկ զգացումով ենք նշում: Մենք չենք կարող այսօր չհիշել, որ ինտերնացիոնալում եղել է նաև ռուսական սեկցիա, որ ռուս ռևոլյուցիոներները մասնակցել են նրա պայքարին: Մենք չենք կարող չհիշել, որ ինտերնացիոնալում ռուսական ռևոլյուցիոներների առաջին ներկայացուցիչը եղել է մեծ Մա՛րքսը: *(Բուռն ծափահարություններ)*:

Եվ երբ Կարլ Մարքսը կարողանար մեզ հետ միասին տոնել ինտերնացիոնալի հարյուրամյակը, ապա նա այսօր խոր գոհունակությամբ կնայեր մեր երկրին, մեր ժողովրդի նվաճումներին: Մենք, մեր կողմից, կարող էինք Մարքսին հպարտությամբ ասել՝ այն, ինչի դուք պրոլետարիատին կոչում էիք, իրողություն է դարձել մեր երկրում: Այսօր սովետական երկրում գոյություն ունի արդեն ոչ թե ռևոլյուցիոներների մի փոքրիկ սեկցիա, այլ հզոր ու կոփված կոմունիստական պարտիա, որն ստեղծել է Ձեր աշակերտ և Ձեր ռևոլյուցիոն գործի շարունակող մեծ Լենինը: *(Ծափահարություններ)*: Այսօր ամբողջ աշխարհի աշխատավորները իրենց պայքարում առաջնորդվում են մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ ուսմունքով: Եվ մեր ամբողջ ժողովուրդը կանգնած է կոմունիզմի դիրքերում:

Իր գոյության գրեթե յոթանասուն տարիների ընթացքում մեր լենինյան պարտիան միշտ էլ առաջնորդվել է պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներով: Ինտերնացիոնալի պատգամները, Մարքսի, Էնգելսի, Լենինի պատգամները մեր պարտիայի համար եղել են և մնում են սրբազան պատգամներ: *(Ծափահարություններ)*։ Մեր պարտիան կարող է գոհունակությամբ ասել, որ ինքը ավանդ է մուծել միջազգային բանվոր դասակարգի գործում:

Վլադիմիր Իլյիչ Լենինի ղեկավարությամբ մեր ժողովուրդը կատարեց Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիան: Տապալելով կապիտալիզմը, նա դրանով իսկ կատարեց ինտերնացիոնալի առաջնագույն պատվիրանը՝ վերջ տվեց շահագործողների տիրապետությանը մոլորակի մեկ վեցերորդ մասում:

Հոկտեմբերի հաղթանակը վառեց ռևոլյուցիոն հրդեհների բոցը Արևելքում և Արևմուտքում:

Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո մեր ժողովուրդը համառորեն աշխատում և պայքարում էր: Նա աշխարհում առաջինը կառուցեց սոցիալիստական հասարակարգ, վերափոխեց իր հայրենիքը, այն դարձրեց ազատ ու հզոր: Սոցիալիզմը ազատագրեց ժողովրդի տաղանդները, նրանց առջև բացեց ստեղծագործելու անսահմանափակ ասպարեզ, մարդու կյանքը արժանավայել դարձրեց նրա մեծ կոչմանը:

Այսօր մենք մեր ինտերնացիոնալ պարտքն ենք համարում նախ և առաջ հաջողությամբ կառուցել կոմունիզմը, ստեղծել խաղաղության և առատության հասարակարգ, որտեղ նրա ամեն մի քաղաքացի հնարավորություն կգտնի ապրելու երջանիկ, լրիվ ծավալելու իր ամբողջ տաղանդն ու ձիրքը: Մենք խորապես համոզված ենք, որ նոր հասարակարգի կառուցումը օգնում է մեր եղբայրներին պայքարելու բոլոր երկրներում սոցիալիզմի արդար գործի համար: *(Ծափահարություններ)*։

Սոցիալիզմի և կոմունիզմի կառուցումը Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների վճռական ավանդն է համաշխարհային ազատագրական պայքարում: Սոցիալիստական երկրների ժողովուրդների ստեղծարար աշխատանքը դարձել է ռևոլյուցիոն ճակատամարտերի կարևորագույն թատերաբեմը: Եվ որքան ակտիվորեն, որքան հաջողությամբ կատարվի այդ ստեղծարար աշխատանքը, այնքան ուժգին կերպով կքայքայվեն կապիտալիզմի, գաղութատիրության, նեոգաղութատիրության դիրքերը, այնքան մեծ կլինի մեր օգնությունը կապիտալի երկրների դասակարգային եղբայրներին, իրենց ազատության և ազգային ազատագրության համար պայքարող բոլոր ժողովուրդներին: *(Բուռն ծափահարություններ)*:

Ամրապնդելով մեր սոցիալիստական հայրենիքի հզորությունը, մենք դրանով իսկ լուրջ ավանդ ենք մուծում խաղաղության պաշտպանության ինտերնացիոնալ մեծ գործում: Մեզ համար խաղաղությունը պացիֆիստական հեքիաթ, վերացական իդեալ չէ: Մենք լավ գիտենք, որ պատերազմի վտանգը չի անցել: Ձգտելով մարդկությանը փրկել անուղղելի աղետներից, մենք մեր պաշտպանունակությունը պահում ենք այնպիսի մակարդակի վրա, որը թույլ է տալիս պաշտպանել խաղաղությունը: Ջերմամիջուկային դարում խաղաղության պաշտպանությունը և սոցիալիզմի համար մղվող պայքարը ոչ թե երկու տարբեր բաներ են, այլ մի մեծ, ընդհանուր ռևոլյուցիոն գործ:

Վերջապես, մենք մեր ինտերնացիոնալ պարտքը հասկանում ենք որպես արդիականության բոլոր ռևոլյուցիոն, դեմոկրատական շարժումների պաշտպանություն: Մեր դասակարգային եղբայրները, իմպերիալիզմի դեմ մղվող

պայքարի ընդհանուր գործի եղբայրները, իրենց ազատության համար պայքարող և անկախ զարգացման ուղին բռնած երկրների մեր բարեկամները կարող են վստահ լինել, որ ՍՄԿԿ-ն, սովետական ժողովուրդը այսուհետև ևս կըկատարեն իրենց այդ սրբազան պարտքը: *(Երկարատև ծափահարություններ)։*

Նշելով առաջին ինտերնացիոնալի հարյուրամյակը, մենք՝ սովետական կոմունիստներս, բոլոր եղբայրական պարտիաներին, բոլոր ռևոլյուցիոն ուժերին կոչ ենք անում՝ ավելի սերտորեն համախմբել շարքերը, հաղթահարել բոլոր դժվարությունները, համախմբվել մարքսիզմ-լենինիզմի դրոշի ներքո՝ հանուն բանվոր դասակարգի գործի հաղթանակի, հանուն մարդկության բացարձակ մեծամասնության: *(Ծափահարություններ)։*

Մենք կոչ ենք անում, որ բոլոր ռևոլյուցիոն ուժերը լայնորեն միավորվեն ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո: Մենք հաստատ գիտենք, որ որքան լայն ու համախմբված լինեն ազատության մարտիկների շարքերը, այնքան արագ հաղթանակ կտանի մեր մեծ գործը: *(Երկարատև ծափահարություններ)։*

Մեզ համար առաջվա պես որպես մարտական կոչ են հնչում՝ «Պրոլետարներ բոլոր երկրների և ճնշված ժողովուրդներ, միացե՛ք» խոսքերը: *(Բուռն ծափահարություններ)։*

Այս դահլիճում մեզ հետ միասին ներկա են Սովետական Միությունում հյուր գտնվող՝ աշխարհի տարբեր շրջանների մարքս-լենինյան պարտիաների, դեմոկրատական շարժումների ներկայացուցիչները: Մենք նրանց բոլորին եղբայրական ողջույն ենք հղորդում: *(Երկարատև ծափահարություններ)։*

Մենք ջերմորեն ողջունում ենք միջազգային ամբողջ բանվոր դասակարգին, միջազգային ամբողջ կոմունիստական շարժմանը, աշխատավոր բոլոր մարդկանց, խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի բոլոր մարտիկներին: *(Երկարատև ծափահարություններ)։*

Ընկերնե՛ր: Մեր հաղթանակները, Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների հաղթանակները առանձնահատուկ ուժ տվեցին Մարքսի և Լենինի ուսմունքին: Այժմ աշխարհի բոլոր անկյուններում աշխատավորները սեփական օրինակներով համոզվում են այդ ուսմունքի ճշտությանը: Մարքսիզմ-լենինիզմին հավատարմությունը բանվորական գործի հաջողությունների աղբյուրն ու անհրաժեշտ պայմանն է: Սոցիալիստական բանվոր դասակարգը, միավորվելով ամբողջ ժողովրդի հետ, աշխարհին ցույց տվեց, որ, հենվելով մարքսիզմ-լենինիզմի վրա, նա կարող է հրաշքներ գործել, կարող է պատմական կարճ ժամանակում իր երկրները հետամնացությունից հասցնել հզորության ու բարգավաճման:

Ընկերնե՛ր: Բանվոր դասակարգը, աշխատավոր ժողովուրդը այժմ ոչ միայն «մերկերի և ստրուկների աշխարհն» է: Նա այժմ տեր է աշխարհի շատ երկրներում: Նրա մարտական, կազմակերպված ջոկատները գործում են բոլոր մայրցամաքներում: Ուստի և այս հանդիսավոր օրերին հատկապես նշանակալի են հնչում պրոլետարական անմահ հիմնի խոսքերը.

«Այս հին աշխարհը կփորենք մենք
Մինչև հիմքերը, և հետո
Մեր նոր աշխարհը կշինենք մենք,
Ուր ո՛չ ստրուկ կա, ո՛չ դժգոհ»:

*(Բուռն ծափահարություններ)։*

Ավելի բա՛րձր պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը: *(Բուռն, երկարատև ծափահարություններ)։*